**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**
**/2-րդ հանրային լսման/**
**Կապանի «Նորոգշին» ՍՊԸ-ի կողմից Սյունիքի մարզի Բարգուշատի անդեզիտների երևակման տեղամասի երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության երկրորդ հանրային լսման վերաբերյալ**

Արծվանիկ բնակավայր «08» հոկտեմբերի 2025թ.

Կազմակերպված երկրորդ հանրային լսմանը մասնակցում էին՝

- հանրային լսման պատասխանատու, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Հովիկ Մեսրոպյանը:
- Սյունիքի մարզի Կապան համայնքի ղեկավարի տեղակալ Մ. Հարությունյանը:
- Գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Ա. Հովակիմյանը:
- Արծվանիկ բնակավայրի վարչական ղեկավար Ա. Հարությունյանը:
- Կապանի «Նորոգշին» ՍՊԸ-ի տնօրեն Գ.Փարսյանը, ներկայացուցիչ Ս.Գևորգյանը, համայնքի բնակիչներ:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (03.05.2024թ., այսուհետ՝ Օրենք) համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի N2343-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) սահմանված կարգով՝ 2025թ. հոկտեմբերի 8-ին ժամը 12:00-ին Կապան համայնքի Արծվանիկ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ Կապանի «Նորոգշին» ՍՊԸ-ի կողմից Սյունիքի մարզի Բարգուշատի անդեզիտների երևակման տեղամասի երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության երկրորդ հանրային լսումը:

Հանրային լսումը վարեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Հովիկ Մեսրոպյանը, ով հանդես եկավ բացման խոսքով, ներկայացրեց փորձաքննական գործընթացը և կատարված աշխատանքները:

Ներկայացվեց, որ նախատեսվում է իրականացնել Սյունիքի մարզի Բարգուշատի անդեզիտների երևակման տեղամասի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ: նախատեսվող գործունեությունը դասակարգվում է որպես Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Վերոգրյալի հիման վրա՝ Օրենքով և Որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան՝ 2024 թվականի նոյեմբերի 27-ին, ժամը 12:00-ին Կապան համայնքի Արծվանիկ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում կայացել է նախատեսվող գործունեության վերաբերյալ առաջին հանրային լսումը:

Այդ լսման արդյունքում 2024 թվականի դեկտեմբերի 10-ի N 179-Ա որոշմամբ Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանին Կապանի «Նորոգշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Սյունիքի մարզի Բարգուշատի անդեզիտների երևակման տեղամասի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ իրականացմանը տրամադրել է իր նախնական համաձայնությունը:

Հաշվետվությունն Օրենքով սահմանված կարգով ներկայացվել է շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներին և տարբեր գերատեսչություններ կարծիքներ ստանալու նպատակով: Փորձաքննության իրականացման արդյունքում հաշվետվության վերաբերյալ եղել են առաջարկություններ և դիտողություններ, որոնց հիման վրա հաշվետվությունը ներկայացվել է նախաձեռնողին լրամշակման:

Լրամշակված հաշվետվությունը ներկայացնելուց հետո, Օրենքով և կառավարության որոշման պահանջներին համապատասխան նշանակվել են հանրային երկրորդ լսումներ:

Հ. Մեսրոպյանը նշեց, որ երկրորդ հանրային լսման վերաբերյալ ծանուցումը կատարվել է Օրենքի և Որոշման պահանջներին համապատասխան, սահմանված ժամկետներում հանրային քննարկման վերաբերյալ հայտարարությունը հրապարակվել է «Առավոտ» օրաթերթի 2025 թվականի սեպտեմբերի 19-ի համարում, հայտարարությունը տեղադրվել է Շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքում:

Հաջորդիվ՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Հովիկ Մեսրոպյանը ներկայացրեց նախատեսվող գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը, կապված հայցվող տարածքի հողի նպատակային նշանակության վերաբերյալ: Ըստ կադաստրի կոմիտեի ներկայացված գրության՝ նշված կոորդինատներով տարածքը կադաստրային քարտեզում տեղադրելիս ամբողջությամբ գտնվում է ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի Արծվանիկ բնակավայրի՝ գյուղատնտեսական նշանակության հողամասի սահմաններում, սակայ անտառային քաղաքականության վարչության և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կեղմից ներկայացված գրությամբ նշվում է. որ «Կապանի «Նորոգշին» ՍՊԸ-ի կողմից Սյունիքի մարզի Բարգուշատի անդեզիտների երևակման տեղամասի երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տեղեկացնում եմ, որ հայցվող տարածքից շուրջ 5,5 հա մակերեսով տարածքը ըստ արբանյակային պատկերների անտառածածկ է և գտնվում է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Կապանի անտառտնտեսություն» մասնաճյուղի տարածքում:

Հանրային լսման ընթացքում ելույթ ունեցան Սյունիքի մարզի Կապան համայնքի ղեկավարի տեղակալ Մ. Հարությունյանը, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Ա. Հովակիմյանը, Արծվանիկ բնակավայրի վարչական ղեկավար Ա. Հարությունյանը, նշելով, որ հայցվող տարածքի հողերը գտնվում են Սյունիքի մարզի Կապան համայնքի Արծվանիկ բնակավայրի՝ գյուղատնտեսական նշանակության հողամասի սահմաններում: Միաժամանակ նշեցին, որ անհրաժեշտ է առաջնորդվել կադաստրի կոմիտեի կողմից ներկայացված կարծիքի:

Կապանի «Նորոգշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՇՄԱԳ հաշվետվության վերաբերյալ մասնակիցների կողմից եղան հարցադրումներ: Հարցադրմանը տրվեց սպառիչ պատասխաններ:

Հարցուպատասխանին հաջորդեց ընդհանուր բնույթի քննարկում՝ որից հետո հանրային լսման պատասխանատուն արձանագրեց, որ բարձրացված հարցադրումներին տրվեցին սպառիչ պատասխաններ: Հանրային լսման մասնակիցները տվեցին իրենց համաձայնությունը նախատեսվող գործունեության վերաբերյալ: Հանրային լսման պատասխանատուն ամփոփեց և փակեց հանրային լսումը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝ Հովիկ Մեսրոպյան

Կապանի «Նորոգշին» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Սահարոն Գևորգյանը